ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Սեդրակյան Արթուր Գագիկի,

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության քաղաքականության մշակման և վերլուծության բաժմի պետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ղազախստանի Հանրապետություն ք. Ալմաթի 2026 թվականի սեպտեմբերի 25-28-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՀ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ԱՊՀ խորհրդի նիստին» և «Ալմաթին ԱՊՀ սպորտայն մայրաքաղաք» միջոցառմանը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

- ✓ Ղազախստանի Հանրապետության պետական քաղաքականությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում,
- ✓ Միջպետական ծրագրի իրականացումը Ալմաթի քաղաքում՝ «Համամիութենական սպորտային մայրաքաղաք»
- ✓ Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների 2021-2030 թվականների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցության զարգացման ռազմավարության և սպորտի ոլորտում ԱՊՀ առաջնությունների

(առաջնություններ, գավաթներ) անցկացման օրացույցային պլանի իրականացման ընթացքի վերաբերյալ:

- ✓ Ղրղզստանի Հանրապետության տարածքում IV ԱՊՀ խաղերի անցկացման և «Համագործակցության սպորտային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի 2027 թվականի իրականացման մասին:
- ✓ «Համագործակցության սպորտային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի 2028 թվականի իրականացման վերաբերյալ,
- ✓ **2029 թվականին ԱՊՀ 5-րդ խաղերը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու և «Համագործակցության սպորտային մայրաքաղաքներ» միջպետական ծրագիրն իրականացնելու մասին,**
- ✓ 2027 թվականի աշխատանքային պլանի և Ղրղզստանի Հանրապետության նախագահության վերաբերյալ Խորհրդում հաջորդ ժամանակահատվածում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

- ✓ Ֆզիկական կուլտուրայի և սպորտի ԱՊՀ խորհրդի նիստի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել Ղազախստանի բժշկագիտական կենտրոնի ղեկավարության հետ,
- ✓ Հանդիպումներ ունեցա Ղազախստանի Հանրապետության սպորտի նախարարի տեղակալ Սարիկ Ժարասբաեվի հետ,
- ✓ Հանդիպում ունեցա Ուզբեկստանի Հանրապետության սպորտի նախարարի տեղակալ Մուրադ Իսմաիլովի հետ,
- ✓ Հանդիպում ունեցա Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարի տեղակալ Ալեքսեյ Մարոզովի հետ
- ✓ Հանդիպում ունեցա ԱՊՀ գործադիր մարմնի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ղեկավար մարմնի ներկայացուցիչների

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- ✓ Ղազախստանի սպորտային գիտաբժշկական կենտրոնի հետ ձեռք բերվեցին պայմանավորվածություններ կենտրոն ներուժի օգտագործման, համագործակցության, սպորտային բժիշկների, սպորտային ոլորտի գիտնականների, ոլորտի մասնագետների, սպորտի ոլորտի կառավարման մասնագետների փորձի փոխանակման ուղղությամբ, համատեղ կազմակերպվող սպորտային գիտա-բժշկական ֆոռումների մասնակցության ուղությամբ, որը մեծ խթան կապահովի ոլորտին:
- ✓ Ընդունվեց ի գիտություն Կիրգիզիայի Հանրապեության ներկայացուցչի ելույթը և գործուն քայլերը 2027 թվականին Բիշկեկ քաղաքը որպես ԱՊՀ սպորտային մայրաքաղաք և ԱՊՀ մարզական 4-րդ խաղերի

անցկացումը 2027 թվականին, խորհրդի կողմից դրական արձագանք ստացավ և ընդունվեց համապատասխան որոշումը:

- ✓ Առաջարկվեց շարունակական կերպով իրականացնել համապատասխան քննարկումներ ծրագրի իրականացման ուղությամբ.
- ✓ Առաջարկվեց մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը ներկայացնել խաղերի անցկացման կանոնակարգև և մարզաձևերի անցկացման ծրագրերը.
- ✓ «Համամիութենական սպորտային մայրաքաղաք» 2028 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը, որի արդյունքում ընդունվեց ռուսական կողմի առաջարկը 2028 թվականի որպես ԱՊՀ սպորտային մայրաքաղաք հռչակելու մասին, որը ավելի ուշ կներկայացվի.
- ✓ Հայաստանի ներկայացչուցչի կողմից ներկայացվեղ առաջարկները 2029 թվականի ԱՊՀ 5-րդ մարզական խաղերը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու վերաբերյալ, ինչպես նաև Երևան քաղաքը 2029 թվականի ԱՊՀ սպորտային մայրաքաղաք հռչակելու մասին:
- ✓ Խորհրդի կողմից առաջարկը ստացավ դրական կարծիք և հավանության առժանացավ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿԸՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- ✓ Խորհրդի կողմից առաջարկվեց բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչներին հետևողական մնալ ԱՊՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2021-2030 թվականների ռազմավարության գործունեության ծրագրի կետերի ապահովմանը.
- ✓ Կիրգիզիայի Հանրապետության ներկայացուցիչներին 2027 թվականի ԱՊՀ խաղերի անցկացման ուղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ կատարել գործուն քայլեր և ներկայացնել անդամ պետություններին.
- ✓ 2029 թվականի ԱՊՀ մարզական խաղերը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու վերաբերյալ համապատասխան որոշումը, ինչպես նաև Երևանը ԱՊՀ սպորտային մայրաքաղաք հռչակելու որոշումը ներկայացնել ԱՊՀ արտաքին գործերի նախարարների ստորագրմանը:

Արթուր Սեդրակյան

30.09.2026 թ.